# Հայկական հարցը Փարիզի խաղաղության վեհաժողովում: Սևրի պայմանագիրը

### *Հայկական հարցը Սան Ռեմոյի խորհրդաժողովում*

Թուրքիայում բախվում էին բոլոր մեծ տերությունների շահերը: «Այնտեղ,– գրում է Լլոյդ Ջորջը,– նկատվում էր տերությունների խանդոտ մրցակցությունը, և նրանցից յուրաքանչյուրն այդ փլուզվող կայսրության ինչ–որ անկյունում ուներ իրական կամ կարծեցյալ պատմական, կրոնական, ֆինանսական կամ տարածքային շահեր»[339]: Այդ հակասությունների դժվար լուծելիությունն այն գլխավոր պատճառն էր, որ Փարիզի խորհրդաժողովում Թուրքական հարցի քննարկումն անընդհատ հետաձգվում էր: Իսկ դա առաջին հերթին բացասաբար էր ազդում Հայկական հարցի բարեհաջող լուծման հեռանկարների վրա:

Հայաստանի մանդատի հարցի լուծումը բոլոր դեպքերում կախված էր Թուրքիայի հետ պայմանագիր կնքելուց, որի նախապատրաստման ճանապարհին կարևորագույն քայլեր էին նախ՝ 1920 թ. փետրվար–մարտ ամիսներին Լոնդոնում տեղի ունեցած դաշնակից տերությունների դեսպանների խորհրդաժողովը, ապա՝ Սան Ռեմոյում (Իտալիա) 1920 թ. ապրիլի 19–ից 26–ը կայացած դաշնակից տերությունների խորհրդաժողովը: Այստեղ էր, որ քննարկվող հարցերի շարքում վերջնականապես մշակվեց նաև Օսմանյան կայսրության հետ հաշտության պայմանագրի նախագիծը: Սան Ռեմոյի Դևաչան վիլլայում գումարված Անտանտի տերությունների գերագույն խորհրդի խորհրդաժողովին մասնակցում էին լորդ Ջ. Քերզոնը և Լ. Ջորջը (Անգլիա), Ա. Միլյերանը և Ֆ. Բերտելոն (Ֆրանսիա), Ֆ. Նիտտին և Սցիալոյան (Իտալիա), Կ. Մացուին (Ճապոնիա): Խորհրդաժողովին որպես դիտորդ մասնակցում էր նաև ԱՄՆ ներկայացուցիչը:

Սան Ռեմոյի խորհրդաժողովում առավել հանգամանորեն քննարկվեց Արևմտյան Հայաստանի հարցը: Այդ կապակցությամբ Սան Ռեմո էին հրավիրվել հայկական երկու պատվիրակությունների ղեկավարներ Ա. Ահարոնյանը և Պողոս Նուբարը:

Խորհրդաժողովի մասնակիցներին արդեն հայտնի էր, որ ԱՄՆ սենատում մեծ առարկություններ կային Վ. Վիլսոնի առաջարկների վերաբերյալ, որ քեմալական Թուրքիան հասցրել էր իր դիրքերն ամրապնդել Արևմտյան Հայաստանում, և առանց ուժ գործադրելու անհնար էր հասնել Հայաստանի անկախությանը: Սակայն եվրոպական տերություններից և ոչ մեկը Հայաստան զորք ուղարկելու մտադրություն չուներ, իսկ հայերը չունեին խնդիրն ինքնուրույն լուծելու բավարար քանակի կազմակերպված ռազմական ուժ: Հստակություն չկար, թե ինչ սահմաններ էր ունենալու Հայաստանը, եթե լուծվեր նրան անկախություն տալու հարցը:

---

[338] Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 199:
[339] Джордж Л., նշվ աշխ., հ. 2,.էջ 199:

Հայերի կոտորածների, տեղահանումների, հայկական նահանգներում թուրքերի և քրդերի վերաբնակեցման՝ տասնյակ տարիներ վարվող քաղաքականությունը թուրքերի համար ցանկալի արդյունքներ էր տվել. նույնիսկ բուն հայկական տարածքներում համարյա գերակշռում էր մահմեդական տարրը: Դաշնակիցների հռչակած ազգերի ինքնորոշման սկզբունքն այդ պայմաններում չէր կարող հայերի օգտին գործել: Բարդ էր հատկապես Էրզրումի հարցը. այն Հայաստանի անվտանգության համար անհրաժեշտ էր մտցնել նրա կազմի մեջ, բայց այդտեղ գերակշռում էր մահմեդական բնակչությունը: Դաշնակիցները հասկանում էին՝ եթե Էրզրումը թողնվի թուրքերի ձեռքում, ապա Հայաստանը կզրկվի արտաքին աշխարհի հետ հաղորդակցության միակ ճանապարհից: «Գրեթե անհնար է ստեղծել նոր հայկական պետություն՝ չտալով Էրզրումը Հայաստանին»,– հայտարարում է Ֆրանսիայի կառավարության ներկայացուցիչ Ֆ. Բերտելոն[340]:

Լորդ Ջ. Քերզոնը, հակառակ իր վարչապետի կարծիքի, գտնում էր, որ եթե Էրզրումը հայերին չտրվի, մեծ հարված կլինի նրանց: Նա նշում է, որ ԱՄՆ–ը «հատկապես պնդում էր Տրապիզոնը հայերին տալու առաջարկի վրա, բայց եթե Էրզրումը մնա թուրքերի ձեռքում, Հայաստանը երբեք չի տեսնի Տրապիզոնը»[341]: Ջ. Քերզոնը՝ որպես Լոնդոնում դաշնակից տերությունների արտգործնախարարների և դեսպանների խորհրդաժողովի նախագահ (1920 թ. փետրվար), պաշտպանում էր այդ որոշումը: Իսկ Ֆ. Նիտտին գտնում էր, որ «Էրզրումը վտանգավոր նվեր կլինի հայերին», և թուրքերն այդ դեպքում կհրաժարվեն պայմանագիրը ստորագրելուց: Սան Ռեմոյի խորհրդաժողովի մասնակիցներից շատերը վախենում էին, որ եթե Էրզրումը տրվի հայերին, դա առիթ կծառայի թուրքերին՝ կազմակերպելու հայերի նոր կոտորածներ:

Անգլիական ռազմական փորձագետների կարծիքով՝ Մուստաֆա Քեմալի դեմ պայքարելու համար անհրաժեշտ կլիներ հսկայական բանակ ուղարկել նրա դեմ, բայց, ինչպես նշում էր Լ. Ջորջը, «ոչ ոք փոքր իսկ մտադրություն չունի կազմավորելու այդպիսի բանակ»: Դաշնակիցները ցանկանում էին պարզել՝ «Հայաստանն ի վիճակի՞ է գոյություն ունենալու որպես պետություն և առանց կողմնակի օգնության պաշտպանելու իր սահմանները»: Լ. Ջորջի կարծիքով՝ «մեծ տերությունների կողմից անագնիվ կլիներ թղթի վրա ստեղծել նոր Հայաստան՝ չունենալով երկտասարդ պետությունը պաշտպանելու իրական մտադրություն»: Նա գտնում էր, որ «մեծ տերությունները չեն կարող գործնական օգնություն կազմակերպել Հայաստանին», և անհրաժեշտ էր համարում դիմել Վ. Վիլսոնին, թե ԱՄՆ–ը պատրա՞ստ է արդյոք Հայաստանին ցույց տալու անհրաժեշտ օգնություն: Ջ. Քերզոնը վստահություն էր հայտնում, որ հայերը կհայտարարեն, թե «իրենք միանգամայն պատրաստ են դիմելու ռիսկի և պաշտպանելու իրենց պետությունը առանց դրսի օգնության»: Նա հիշեցնում է, որ «Գերագույն խորհուրդն արդեն որոշել է, որ Հայաստանը պետք է մասնակցի պայմանագրի ստորագրմանը»:

Սան Ռեմոյում դաշնակիցների հարցերին Պողոս Նուբար փաշայի և Ա. Ահարոնյանի պատասխանները մեծ հիասթափություն էին առաջացրել խորհրդաժողովի մասնակիցների մոտ: «Դժվար էր պատկերացնել,– գրում է Լ. Ջորջը,– հայկական դիրքերի անհուսալիության և անհոգ անփութության ավելի վառ ապացույց, քան այն, թե ինչպես էին հայտարարություններ անում վերին աստիճանի տաղանդավոր այդ ժողովրդի ականավոր ներկայացուցիչները, որոնցից կախված էր նրա՝ որպես անկախ ազգի ողջ ապագան»[342]:

[340] Նույն տեղում, էջ 426:

[341] Նույն տեղում, էջ 427:

[342] Նույն տեղում, էջ 437:



«Հայկական դիրքերի անհուսալիությունը» պայմանավորեց խորհրդաժողովի ռազմական փորձագետների եզրակացությունը, որում ասված էր, թե, նկատի առնելով տերությունների որոշումը դաշնակից ուժեր Հայաստան չուղարկելու մասին, «հայերն ստիպված կլինեն սահմանափակվել միայն իրենց սեփական ուժերով, իսկ այդպիսի պայմաններում նրանք, ըստ երևույթին, անկարող են տիրելու թուրքական Հայաստանին և հատկապես Էրզրումին»[343]:

Լ. Ջորջը հայտարարեց, որ եթե ԱՄՆ–ը չվերցնի Հայաստանի մանդատը, ինքը հնարավոր չի համարի Մեծ Հայաստանի ստեղծումը: Նա առաջարկեց հետաձգել հարցի լուծումը մինչև ԱՄՆ–ի կողմից վերջնական որոշման ընդունումը:

Դաշնակից տերությունների Գերագույն խորհուրդը նման առաջարկով դիմեց ԱՄՆ կառավարությանը և Վ. Վիլսոնին՝ որպես «անկախ և միանգամայն անաչառ իրավարարի»՝ որոշելու Հայաստանի սահմանների հարցը: Գերագույն խորհրդին հատկապես հետաքրքրում էր, թե Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթների որ մասերը պետք է միացվեին գոյություն ունեցող հայկական պետությանը:

Ինչ վերաբերում էր Անդրկովկասի հանրապետությունների միջև սահմանների հարցին, այն պետք է միաժամանակ լուծվեր Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանները որոշելիս, եթե հարցը կամավոր համաձայնությամբ չլուծվեր այդ պետությունների կողմից[344]:

ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնը շուտով պատասխանեց, որ համաձայն է ստանձնելու Հայաստանի սահմանները որոշելու իրավարարի առաքելությունը, բայց դրանից ավելի ինքն ի վիճակի չէ որևէ բան անելու: Նկատի էր առնվում Հայաստանին ռազմական ու ֆինանսական օգնություն ցույց տալը[345]:

1920 թ. ապրիլի 23–ին ԱՄՆ կառավարությունը վերջապես ճանաչեց Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ առանց կանխորոշելու պետության սահմանները: Նույն օրը ԱՄՆ պետական քարտուղար Բ. Կոլբին այդ մասին գրավոր հայտնեց Վաշինգտոնում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Գ. Փաստրմաճյանին՝ նշելով, որ Հայաստանի Հանրապետության ճանաչումով չեն կանխորոշվում Հայաստանի Հանրապետության սահմանները, որոնք պետք է հետագայում որոշվեն[346]:

ԱՄՆ–ի կողմից Հայաստանի ճանաչումից հետո՝ 1920 թ. ապրիլի 24–ին, դաշնակից տերությունների Սան Ռեմոյի խորհրդաժողովը վերջնականապես հավանություն տվեց Թուրքիայի հետ կնքվելիք հաշտության պայմանագրի նախագծին: Նրանց համաձայնությամբ շուտով Փարիզ վերադարձավ Կ. Պոլսի թուրքական կառավարության պատվիրակությունը՝ Թևֆիկ փաշայի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում ընդգրկվել էին եվրոպական բոլոր երկրներում հավատարմագրված թուրքական դեսպանները, ինչպես նաև Ջեմալ փաշան և Ռաշիդ բեյը: Մայիսին Ժ. Կլեմանսոյին փոխարինած Փարիզի վեհաժողովի նախագահ Ֆրանսիայի վարչապետ Ա. Միլյերանը թուրքական պատվիրակությանը հանձնեց հաշտության պայմանագրի նախագիծը: Այն կազմվել էր վեհաժողովում անգլիական պատվիրակության անդամ Է. Մոնթեգյուի գլխավորած հանձնաժողովի կողմից[347]:

ԱՄՆ–ի կողմից Հայաստանի մանդատը ստանձնելու հարցն ամերիկյան կոնգրեսում շահագրգիռ քննարկման առարկա դարձավ 1920 թ. մայիսի վերջերից: Մայիսի

[343] Նույն տեղում, էջ 438:

[344] Տե՛ս նույն տեղում, էջ 440–442:

[345] Տե՛ս նույն տեղում, էջ 444–447:

[346] Տե՛ս Papers Relating to the Foreign Relations of the United States, 1920, Vol. III, Washington, 1936, էջ 778:

[347] Տե՛ս Document on British Foreign Policy 1919–1939…, Vol. IV, էջ 1041–1042, 1059:

24-ին նախագահ Վ. Վիլսոնը դիմեց կոնգրեսին՝ առաջարկելով համապատասխան լիազորություններ տալ իրեն՝ Հայաստանի մանդատը ստանձնելու և այնտեղ զորք ուղարկելու համար: Ուղերձում նշվում էր, որ ամերիկյան ժողովուրդը մեծ համակրանք է տածում հայ ժողովրդի նկատմամբ և իր կարեկցանքն է հայտնում նրան: Կոնգրեսին տեղյակ պահելով Սան Ռեմոյում դաշնակիցների ընդունած որոշման մասին, ըստ որի՝ ԱՄՆ-ին առաջարկվում էր վերցնել Հայաստանի մանդատը, Վ. Վիլսոնը միաժամանակ հայտնում էր, որ իրեն է հանձնարարված հանդես գալու որպես միջնորդ դատավոր Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանների որոշման բարդ խնդրում: Ընդ որում նշվում էր, որ խոսքը Արևմտյան Հայաստանի Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի նահանգների և ակնկալվող անկախ Հայաստանին՝ Տրապիզոնի ծովափում դեպի ծով ելք տալու մասին է:

Զննելով Հայաստանին օգնելու անհրաժեշտությունը՝ սենատորների ճնշող մեծամասնությունը դեմ արտահայտվեց Հայաստանի մանդատը վերցնելու առաջարկին: Սենատոր Հիտչոկը, արտահայտելով այդ մեծամասնության կարծիքը, մասնավորապես նշեց, որ ԱՄՆ-ը չի կարող իր վրա վերցնել Հայաստանի մանդատի պատասխանատվությունը, բայց առաջարկեց Հայաստանին տրամադրել 50 մլն դոլար՝ Հայաստանի կառավարության կողմից հետագայում պարտքը մարելու հանձնառության դեպքում (ԱՄՆ-ում գյուղատնտեսական գործիքներ, երկաթուղու զարգացման համար անհրաժեշտ նյութեր գնելու, ինչպես նաև կարգավորելու ֆինանսական ու բանկային գործը): «Ես խիստ դեմ եմ,– ասել է Հիտչոկը,– որ վերցնենք մի մանդատ և ինքներս մեզ պարտավորեցնենք անորոշ ժամանակով Հայաստանում պահել 60 հազար ամերիկյան զորք և ընդգրկվենք ծախսերի մեջ, որոնք, ըստ գեներալ Հարբորդի զեկուցման, միայն առաջին տարում կարող են կազմել 275 000 000 դոլար»[348]:

Քննարկմանը մասնակցած սենատորներ Հ. Լոջը, Վ. Սմիթը, Ջ. Վիլյամսը և մյուսներն առաջարկեցին հրապարակել գեներալ Ջ. Հարբորդի առաքելության զեկուցագիրը և մի քանի օրով հետաձգել քննարկումները:

Զեկուցագրի կրճատված տարբերակը տպագրվեց որպես սենատի փաստաթուղթ: Քննարկումները շարունակվեցին: Ելույթ ունեցողներից շատերն անդրադարձան պահանջվող ծախսերի չափազանց մեծ լինելուն: Իսկ սենատոր Վ. Սմիթը, նշելով, որ Մեծ Բրիտանիան իր իշխանության տակ ունի Միջագետքը, Ֆրանսիան՝ Սիրիան, իսկ Հունաստանը՝ մեկ այլ կտոր՝ նրանց հարևանությամբ, երկյուղ արտահայտեց, որ «ամերիկացիները կտեղադրվենք որպես բուֆեր ընդդեմ Խորհրդային Ռուսաստանի, մենք կվերածվենք բուֆերի ընդդեմ ռազմատենչ այդ ժողովուրդների»: «Հայաստան երկիրը,– ավելացրել է նա,– ինչպես նկարագրված է առաքելության կողմից, անմշակ ու անբերրի..., երկիր է: Ֆրանսիան և Անգլիան վերցրել են նավթով հարուստ հողերն ու պղնձի հանքերը... Միացյալ Նահանգներին նրանք առաջարկում են այն, ինչը ոչինչ չի բերելու, բայց խլելու է չափազանց շատ գումարներ և մարդկային կյանքեր»[349]:

Անդրկովկասում բոլշևիկյան Ռուսաստանի դիրքերի ուժեղացման մասին լուրերն ավելի վճռական էին դարձնում Հայաստանի մանդատը վերցնելու հակառակորդներին: Պնդելով հրաժարվել Հայաստանի մանդատից՝ սենատոր Վ. Սմիթը հունիսի 1-ի իր ելույթում վախ է հայտնում, թե ստեղծված պայմաններում ԱՄՆ-ից կպահանջվի Հայաստանում ունենալ մեկ միլիոնանոց զորք[350]:

Մ. Քեմալը Ջ. Հարբորդի հետ ունեցած հանդիպման ժամանակ իրեն դրսևորել էր որպես ԱՄՆ-ի բարեկամ: Զեկուցման մեջ նշված այդ փաստն իր ազդեցությունն է թողնում որոշ սենատորների վրա, որոնք սկսում են համակրանքով խոսել Մ. Քեմալի հետապնդած նպատակների մասին, քննադատում Անգլիային, որ ուզում է իր վերահսկողության տակ վերցնել սևծովյան նեղուցները: Քննադատություն է հնչում նաև դաշնակից մյուս տերությունների հասցեին, որոնք ձգտում են բաժանել Թուրքիան: Պետք է նկատի ունենալ, որ 1919 թ. ամռանից, երբ Փարիզի վեհաժողովն ԱՄՆ-ին առաջարկել էր վերցնել Հայաստանի մանդատը, անցել էր մոտ մեկ տարի, և իրադրությունը տարածաշրջանում կտրուկ փոխվել էր: «Ըստ Մերձավոր Արևելքից ստացված տեղեկությունների,– իր ելույթում նշում է սենատոր Թոմասը,– կարելի է եզրակացնել, որ բոլշևիկներն արդեն Հայաստանում են և... այդպիսի պայմաններում Հայաստանում ամերիկյան բանակի ներկայությունը կարող է առաջ բերել միայն զինված ընդհարում սովետների հետ»: Այդ կարծիքին էին նաև մի շարք սենատորներ: Կոնգրեսում հայտարարություն եղավ այն մասին, թե Անդրկովկասի «ժողովուրդները ինքնակամ հանձնվել են բոլշևիկներին»: Ութ օր տևած վիճաբանություններն ավարտվեցին նրանով, որ հունիսի 1-ին ԱՄՆ կոնգրեսը որոշում ընդունեց Հայաստանի մանդատից հրաժարվելու մասին: Նախագահ Վ. Վիլսոնի առաջարկին սենատորներից կողմ էին քվեարկել 34-ը, դեմ՝ 43-ը, քվեարկությանը չէին մասնակցել 19 սենատորներ[351]:

Սենատոր Հ. Քինգը վկայել է, որ կոնգրեսն այդ որոշումն ընդունեց հակառակ նախագահ Վ. Վիլսոնի կամքի՝ հաշվի առնելով սենատի արտաքին գործերի կոմիտեի բացասական կարծիքը, որի դեմ քվեարկել էին միայն 12 սենատորներ: «Նախքան նախագահը կուղարկեր իր ուղերձը կոնգրեսին,– ասել է Քինգը,– մենք ստույգ տեղեկությունների հիման վրա նրան տեղեկացրել էինք, որ սենատորները բացասական վերաբերմունք ունեն, որ ուղերձն անպայման կմերժվի», և այդ մերժումը «հրավեր կլինի Հայաստանի թշնամիներին՝ հարձակվելու նրա վրա»: Հետագայում սենատոր Հ. Քինգը նշել է, որ կոնգրեսի այդ որոշումն իրոք ճակատագրական նշանակություն ունեցավ Հայաստանի համար[352]:

348 Congressional Record, Vol. LIX, part 8, p. 7875, 7876.

349 Տե՛ս նույն տեղում, էջ 7889:

350 Նույն տեղում, էջ 8052, 8061:



351 Տե՛ս նույն տեղում, էջ 7964–7970, 7889, 8070, մաս 7, էջ 6978–6979:

352 Տե՛ս նույն տեղում, հ. LXIV, մաս 3, էջ 2497:

**Աղբյուրը՝** *«Հայոց պատմություն. նորագույն ժամանակաշրջան (1918-1945)»*, հ. IV, գիրք I, խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշ., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2010, էջ 153-157: